«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1

26 մարտի 2014 թվականի

2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և մեր խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և մեր խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսումնա-կազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնամեթոդական, ուսումնակազմա-կերպական բաժինները, դեկանատները և ամբիոնները հետևողական աշխատանք են կատարել ուսումնական գործընթացի մեթոդական աշխատանքների արդիա-կանացման, ուսումնական գործընթացի կազմակերպման, կատարելագործման և քննաշրջանները կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Համալսարանում քննական գործընթացը կազմակերպվել է գիտական խորհրդի կողմից հաստատված նոր քննակարգին համապատասխան: Կիսամյակի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են համակարգչային և գրավոր թեստային ստուգարքներ և քննություն-ներ համահամալսարանական հիմնական առարկաների գծով: Ամբիոնների կողմից թարմացվել են հարցաշարերը, շտկվել են բովանդակային և տեխնիկական թերու-թյունները: Թեստային քննությունների վերահսկման գործընթացը կազմակերպվել է ամբիոնների վարիչների, դասավանդող դասախոսների և ասիստենտների մասնակցությամբ:

Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները մեծ ուշադրություն են դարձրել ոչ միայն քննական գործընթացի կազմակերպման և անցկացման, այլ նաև կիսամյակի ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործման հարցերին: Կիսամյակի ընթացքում բավական աշխատանքներ են կատարվել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի արդիականացման, դասա-խոսների անհատական բեռնվածությունների և դրանք գործող պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ:

Առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների ուսման առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 73,7%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 69,8%-ի դիմաց: «Գերազանց» գնահատականներով սովորող-ների տեսակարար կշիռը կազմել է 16,0%, «գերազանց» և «լավ» գնահատական-ներով սովորողներինը՝ 20,2%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 11,5%-ի և 16,3%-ի դիմաց: Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետում գրանցվել է ամենաբարձր (83,6%), իսկ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում՝ ամենացածր (63,3%)

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am

առաջադիմությունը: Հատկապես բարձր է պետական պատվերի համակարգում սովորող ուսանողների առաջադիմությունը: Այդ խմբի ուսանողներից «գերազանց», «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորում է ուսանողների 69,9%-ը, նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում այն կազմել է 67,0%:

Առկա ուսուցման մագիստրատուրայի ուսանողների առաջադիմությունը հիմնական քննաշրջանից հետո կազմել է 78,1%, նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում այն կազմել է 83,9%: Ուսանողների 31,3%-ը կիսամյակն ամփոփել է միայն «գերազանց», իսկ 13,9%-ը՝ «գերազանց» և «լավ» գնահատականներով, նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար՝ 29,1 և 15,9%: Նախորդ կիսամյակի արդյունքների համեմատությունից ակնհայտ է, որ բարձր գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը բարձրացել է, իսկ ընդհանուր առաջադիմության ցուցանիշը նվազել է:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում առաջադիմությունը կազմել է համապատասխանաբար՝ 65,8 և 63,5%, նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում այն կազմել է համապատասխանաբար՝ 60,5 և 68,6%: «Գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար՝ 4,8 և 5,7%, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 16,1 և 8,3%:

Հեռակա ուսուցման բակալավրիատի 1-4-րդ կուրսերում (կրեդիտային համակարգ) քննություններն ու ստուգարքներն անցկացվում են գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգով և արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. ամփոփիչ քննաշրջանից հետո առաջադիմությունը կազմել է 40,2%, «գերազանց» գնահատականներով սովորում է 26 ուսանող (1,7%), «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ 51 ուսանող (3,3%):

Ինչ վերաբերում է առաջին վերահանձնումից հետո ուսման առաջադիմության արդյունքներին, ապա նշենք, որ բացարձակ առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատի 1-4-րդ կուրսերում 73,7-ից բարձրացել է 86,1%-ի, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը զգալիորեն նվազել է (26,3-ից՝ 13,9%):

Առկա ուսուցման մագիստրատուրայում վերահանձնումից հետո առաջադիմությունը կազմել է 94,0, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը՝ 6,0%:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում առաջադիմությունը առաջին վերահանձնումից հետո կազմել է համապատասխանաբար՝ 84,5 և 82,2%, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը նվազել է (34,2-ից՝ 15,5% և 36,5-ից՝ 17,8%):

Հարկ է նշել, որ 2013-2014 ուսումնական տարում հեռակա ուսուցման մագիստրատուրայում 469 մագիստրանտներից, ում թույլատրվել է մասնակցել մագիստրոսական թեզի պաշտպանությանը, ավարտել են ընդամենը 430-ը (91,7%): Նախորդ տարիների թեզը չպաշտպանած 17 շրջանավարտ պաշտպանել և ստացել են դրական գնահատական:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**
   1) մշակել միջոցառումներ քննությունների անցկացման բարելավման և քննակարգում նկատված բացթողումների վերացման ուղղությամբ,
   2) վերահսկողություն սահմանել ամբիոններում կադրերի ընտրության վրա: Ամեն ինչ անել, որպեսզի լսարան մտնեն բարեխիղճ, մասնագիտական բարձր մակարդակ ունեցող, գիտությամբ զբաղվող, բարոյական դրական բնութագրում ունեցող դասախոսներ,
   3) կազմակերպել դեկանատների և ամբիոնների աշխատանքային, կատարողական, ուսումնական վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն: Արդյունքները ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը տվյալ ֆակուլտետի դեկանի հաշվետվության օրը:

2. **Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝**
   1) հետևողական աշխատանք կատարել կիսամյակի ընթացքում նկատված թերությունները և բացթողումները շտկելու ուղությամբ,
   2) ամփոփաթերթերում ուսանողների ակտիվության սխալ հաշվարկման ու գրանցման, ինչպես նաև արդյունքների սխալ լրացման յուրաքանչյուր դեպք առանձին քննարկել և մեղավորներին ներկայացնել տույժի,
   3) ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի պահանջներին համապատասխան, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով՝ ամբիոնների հետ քննարկել հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները, որից հետո ներկայացնել ռեկտորատ,
   4) ամենօրյա հսկողություն իրականացնել ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ: Դասախոսների և ուսանողական խմբերի կողմից դասաձախողումների յուրաքանչյուր դեպք դարձնել համապատասխան պատժամիջոցներ ենթադրող քննարկման առարկա,
   5) արգելել դասերի ընթացքում դասախոսների և ուսանողների կողմից բջջային հեռախոսների օգտագործումը, կարգազանցության յուրաքանչյուր դեպք դարձնել հատուկ քննարկման առարկա,
   6) ամբիոնների հետ համատեղ պարբերաբար քննարկել ուսանողների բացակայությունների հարցը, մշակել միջոցառումներ դրանք նվազեցնելու ուղղությամբ:

3. **Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝**
   1) մինչև մայիս թարմացնել և զարգացնել բոլոր թեստային բազաները: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին առնվազն 20%-ով փոխել թեստային բազաները,
   2) խիստ պատասխանատվությամբ առաջնորդվել ինչպես դասաբաշխումներն իրականացնելիս, այնպես էլ դասախոսական կադրեր ընտրելիս,

3) անհատական բեռնվածությունները բաշխելուց հետո դեկանատներ ներկայացնել ֆակուլտետներում դասավանդվող առարկաների դասախոսների և ասիստենտների ցանկը,
4) հսկողություն սահմանել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների անցկացման որակի, արտալսարանային աշխատանքների, դասախոսների կատարողական կարգապահության նկատմամբ: Հաճախակի կազմակերպել դասալսումներ և դրանց քննարկումներ,
5) բողոքարկումների գործընթացը կազմակերպել միայն հանձնաժողով-ներով (հանձնաժողովում ընդգրկել նաև դասավանդող դասախոսին): Գնահատականի յուրաքանչյուր փոփոխություն դարձնել քննարկման առարկա,
6) հետևել թեստային քննությունների առաջադրանքների կազմմանը, գնահատման գործընթացի յուրաքանչյուր խախտում դարձնել քննարկ-ման առարկա, մշակել որոշակի միջոցառումներ նման երևույթները բացառելու ուղղությամբ,
7) հետևողական աշխատանք կատարել ուսանողների հետ, նպաստել վարձավճարների գանձման գործընթացին,
8) լուրջ ուշադրություն դարձնել ուսանողների փորձառությունների անցկացման վայրերի ընտրության, հաշվետվությունների ժամանակին ներկայացման և պաշտպանության գործընթացին,
9) բացառել զբաղվածության պատճառով հաճախակի դասաձախողումներ թույլ տված մասնագետների ներգրավումը դասավանդման գործընթացում:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

4. **Սույն որոշումը քննարկել ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

26.03.2014 թ.
ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

26 մարտի 2014 թվականի

«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ասպիրանտ Վ.Գ.Գևորգյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է՝ անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական գիտական ընկերությունն իր գործառույթները կատարել է բավարար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ՈՒԳԸ 35-րդ նստաշրջանի երկու փուլերը: Առաջին՝ ֆակուլտետային փուլին, որն անցկացվել է մայիսին, մասնակցել են 78 ուսանողներ: 2013 թվականի մայիսի 31-ին և հունիսի 1-2-ին անցկացված երկրորդ՝ համալսարանական փուլին, մասնակցել են 100 ուսանողներ և մագիստրանտներ. զեկույցով հանդես են եկել 42-ը:

Համալսարանի ուսանողները մասնակցել են նաև այլ բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին, կլոր սեղաններին, բանավեճերին և մրցույթներին:

Գիտական խորհուրդը, բավարար գնահատելով ՈՒԳԸ գործունեությունը, միաժամանակ արձանագրում է, որ ՈՒԳԸ նպատակների լիարժեք իրագործման համար կատարվող աշխատանքները դեռևս բարելավման կարիք ունեն:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **ՈՒԳԸ աշխատանքները գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝**
   1) ամբիոնների նիստերում հաստատել ՈՒԳԸ տարեկան աշխատանքների թեմաների ուղղությունները,
   2) նշանակել ամբիոնային ՈՒԳԸ պատասխանատուներ և գիտական ղեկավարներ ամբիոնի փորձառու դասախոսներից,
   3) ասպիրանտուրայի ընդունելության և անվանական կրթաթոշակների տրամադրման գործընթացներում կարևորել մասնակցությունը ՈՒԳԸ նստաշրջաններին՝ որպես պարտադիր գործոն:

3. **Հանձնարարել դեկաններին՝**
   1) քննարկել և մշտապես վերահսկել ՈՒԳԸ աշխատանքները՝ ֆակուլտետներում և ամբիոններում:

4. **Հանձնարարել ՈՒԳԸ խորհրդին՝**
   1) ներկայացնել ՈՒԳԸ տարեկան նստաշրջանի լավագույն զեկույցները հրատարակման,
   2) մշակել և ներկայացնել ուսանողներին ՈՒԳԸ աշխատանքներով զբաղվելու խթանման ծրագրեր,
   3) ներկայացնել ՈՒԳԸ կանոնադրության փոփոխությունների նախագիծ,
   4) հաստատել գիտական կապեր ՀՊՏՀ-ի հետ համագործակցող բուհերի ՈՒԳԸ-ների հետ:

5. **Որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել գիտության բաժնի պետ Խ.Մխիթարյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

26.03.2014 թ.
ք. Երևան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 3

26 մարտի 2014 թվականի

«Որակի ապահովման աշխատանքների դրվածքը
ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում» հարցի մասին

Նպատակ ունենալով բարձրացնել ՀՊՏՀ որակի ապահովման գործընթաց-ների, ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետությունը և հաշվի առնելով որակի ապահովման գործընթացների անընդհատ բնույթը, գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում ստեղծել որակի ապահովման մշտական հանձնաժողովներ:**

2. **Հանձնարարել ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի տնօրեններին՝**
   1) մշակել և հաստատման ներկայացնել հանձնաժողովների կազմը, գործառույթները և հաշվետվողականության սկզբունքները:

3. **Հանձնարարել ՀՊՏՀ որակի ապահովման բաժնին՝**
   1) իրականացնել մասնաճյուղերի հանձնաժողովների վերապատրաստումը և ներգրավել որակի ապահովման բոլոր գործառույթներում.
   2) մշակել և ներկայացնել ՀՊՏՀ որակի խորհրդի, աշխատանքային խմբերի անդամների և մասնաճյուղերի հանձնաժողովների անդամների խրախուսման կառուցակարգի նախագիծ:

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:**

5. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

26.03.2014 թ.
ք. Երևան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2014 թվականի մարտի 26-ի նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն»** և **«Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն»** մասնագիտացումների բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը հաստատելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆեսոր Ս.Ի.Սահրադյանը, դոցենտ Թ.Մ.Մկրտչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել **«Պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն»** և **«Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն»** մասնագիտացումների բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը՝ համաձայն աղյուսակի.

Մասնագիտացումներ	Ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը	
	Պարտադիր	Ավարտական աշխատանք չգրող ուսանողների համար
Պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն	**Պարենային ապրանքների ապրանքագիտություն**	**Պարենային ապրանքների փորձաքննություն**
Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն	**Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն**	**Ոչ պարենային ապրանքների փորձաքննություն**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

26.03.2014 թ.
ք. Երևան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2014 թվականի մարտի 26-ի նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»** հաստատելու և գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 12-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր **Մ.Ն.Հարությունյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Պրոֆեսորներ Կ.Լ.Աթոյանը, Լ.Հ.Բաղանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. **Հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:**

2. **Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 12-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»** (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն):

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

26.03.2014 թ.
ք. Երևան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2014 թվականի մարտի 26-ի նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը» քննարկելու և հաստատելու մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գ.Ի.Վարդանյան**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Պրոֆեսոր Ս.Ա.Մելքումյանը, դոցենտ Մ.Ն.Թավադյանը, ուսանողական խորհրդի նախագահ Ս.Ս.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել **«Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը»** (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն):

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

26.03.2014 թ.
ք. Երևան